ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի N 1866

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 06-001-0592-0008) ՁՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՁԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ռուսլանի Հարությունյանի, Թամարա Հայկի Սուվորովայի և Աստղիկ Հայկի Մխիթարյանի լիազորված անձ՝ Հեղինե Վլադիմիրի Ավագյանի 20.10.2026թ. թիվ 02/16655 դիմումը, 02.07.2026թ. տրված թիվ 50ԱՎ2133872 լիազորագրի ռուսերեն լեզվից հայերեն թիվ 4364 թարգմանությունը (նոտարական ակտի կոդ՝ 843-20260805-67-10386163), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22072026-06-0040 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 08.10.2026թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-08102026-06-0367 որոշումը,ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ որոշում եմ.

Հաստատել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի (ծածկագիր՝ 06-001-0592-0008) Ձորավար Անդրանիկի փողոց 5 հասցեում գտնվող 0.0530հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները և կադաստրային քարտեզում կատարել համապատասխան ուղղում՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի N 1867

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴԱՎԻԹ ՍԱՄՎԵԼ ՍԻՆԴՈՅԱՆԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻ, ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոռ Սամվելի Սինդոյանի դիմումն իր անչափահաս եղբոր՝ Դավիթ Սամվել Սինդոյանի, նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2026 թվականի հոկտեմբերի 21-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 16, կետ 3), Միասնական սոցիալական ծառայության 2026 թվականի հոկտեմբերի 12-ի գրությունը (եզրակացություն թիվ 152, տրված՝ 09.10.2026թ.), նաև հաշվի առնելով, որ երեխայի մայրը մահացել է, իսկ հայրը ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի 2026 թվականի սեպտեմբերի 07-ի թիվ Ե-40/33-7-13629 գրության համաձայն գտնվում է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 962-Ն որոշմամբ, որոշում եմ.

1. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոցի թիվ 8 շենքի, թիվ 5 բնակարանի անչափահաս բնակիչ Դավիթ Սամվել Սինդոյանին (ծնված՝ 15.06.2021թ., ծննդյան վկայական ԲԱ 413607, տրված՝ 16.06.2021թ., ՔԿԱԳ գործակալության կողմից)՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխայի, վերցնել սկզբնական հաշվառման:
2. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոցի թիվ 8 շենքի, թիվ 5 բնակարանի բնակիչ Գոռ Սամվելի Սինդոյանին (ծնված՝ 13.01.2006թ., նույնականացման քարտ՝ 014934194, տրված՝ 28.03.2023թ. 018-ի կողմից) նշանակել անչափահաս Դավիթ Սամվել Սինդոյանի (ծնված՝ 15.06.2021թ., ծննդյան վկայական ԲԱ 413607, տրված՝ 16.06.2021թ., ՔԿԱԳ գործակալության կողմից) նկատմամբ խնամակալ մեկ տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 27
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1868

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 8 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹՈՒՐ ՎԱԶԳԵՆԻ ԵԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽՈՀԱՆՈՑԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Վազգենի Եգորյանի 18.09.2026 թվականի թիվ 02/14662 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 27092024-06-0019 վկայականը, 08.09.2026թ. թիվ ԱՇԹԴ/517/10692-26 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), 17.09.2026թ. թիվ Կ-17092026-06-0147 գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Արթուր Վազգենի Եգորյանին սեփականության իրավունքով պատկանող Գ. Նժդեհի փողոց 1-ին փակուղի 8 հասցեում գտնվող խոհանոցին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Գ. Նժդեհի փողոց, 2-րդ նրբանցք, 13 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1869

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՌՈՒՍԹԱՎԻԻ ՓՈՂՈՑ 3/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԻՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՍԱՐԳՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նինա Համբարձումի Սարգսյանի լիազորված անձ՝ Նունե Կոլյայի Սարգսյանի 12.10.2026 թվականի թիվ 02/16062 դիմումը, 20.11.2023թ. թիվ 794 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ՝ 763-20240209-65-7684204), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 29092026-06-0036 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Նինա Համբարձումի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ռուսթավիի փողոց 3/10 հասցեում գտնվող շենքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Ռուսթավիի փողոց, 3 շենք, 10 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1870

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԹԱՂԱՄԱՍ 14Ե ՇԵՆՔ, 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՄԻՆԵ ԱՐԱՅԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմինե Արայի Թորոսյանի 13.10.2026 թվականի թիվ 02/16185 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18092026-06-0014 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Արմինե Արայի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող Տարոն-4 թաղամաս 14ե շենք, 5 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս, 14ե շենք, 5 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1871

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼՈՒՍԻՆԵ ՎԱԼԵՐԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լուսինե Վալերիկի Մարտիրոսյանի 13.10.2026 թվականի թիվ 02/16166 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14022025-06-0033 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Լուսինե Վալերիկի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Կուրղինյան փողոց 13 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Կ. Հալաբյան փողոց, 13 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1872

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉԱՊԱԵՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վլադիմիր Սերգեյի Եգանյանի 18.09.2026 թվականի թիվ 02/14697 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 18.09.2026թ. թիվ Կ-18092026-06-0062 գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Չապաևի փողոց թիվ 2 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Մոնթե Մելքոնյան փողոց, 2/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1873

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 34/151 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԵՐԱ ՄԻՀՐԱՆԻ ՆԱՎՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վերա Միհրանի Նավոյանի 06.10.2026 թվականի թիվ 02/15744 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 0098593 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վերա Միհրանի Նավոյանին սեփականության իրավունքով պատկանող Տիգրան Մեծի 34/151 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Վարդանանց փողոց, 23 շենք, 151 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1874

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՔԻՄԻԱԳՈՐԾՆԵՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԲԱԲԼՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուսաննա Արշալույսի Բաբլումյանի լիազորված անձ՝ Ռուբեն Գուրգենի Հովհաննիսյանի 12.08.2026 թվականի թիվ 02/12392 դիմումը, անշարժ գույքի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 14.06.2024 թվականի թիվ 3529 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 741-20240614-90-8035134), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08072026-06-0104 վկայականը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց 33 հասցեում գտնվող Սուսաննա Արշալույսի Բաբլումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը և դրա վրա գտնվող շինությունները՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված թիվ 1 և 2 հատակագծերի և եզրակացությունների:

2. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Քիմիագործների 2-րդ փողոց 33 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա. 0.03521հա (0.03411հա + 0.0022հա:2) մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 150.2քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Քիմիագործների 2-րդ փողոց, 33 բնակելի տուն:

բ. 0.03469հա (0.03359հա + 0.0022հա:2) մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 146.39քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինություններին տրամադրել նոր

փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Քիմիագործների 2-րդ փողոց, 33/1 բնակելի տուն:

0.0022հա մակերեսով հողամասը և դրա վրա գտնվող 17.43քմ մակերեսով բաց պատշգամբը և 2.38քմ մակերեսով աստիճանահարթակը գտնվում է ընհանուր համատեղ օգտագործման տակ Քիմիագործների 2-րդ փողոց 33 և Քիմիագործների 2-րդ փողոց 33/1 հասցեների միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2026 թվականի N 1875

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ) ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲ. ԹԻՎ 13 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՎԵՐ ՏԵԼՄԱՆԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նվեր Տելմանի Համբարյանի (ծնված՝ 31.01.1970թ.) 12.08.2026 թվականի թիվ 02/12386 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 07.04.1988 թվականին տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «Գասպար Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 20.11.2017 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 4371 (Նոտարական ակտի կոդ:763-20171119-1956123) վկայագիրը, 12.10.2026 թվականին «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1- 261/26 Ի եզրակացությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից տրված մասնագիտական եզրակացությունները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամաս 1-ին փողոց 1-ին նրբ. թիվ 13 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 740.0քմ և նրան կից 44.1քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1959-2013 թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 784.1քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Նվեր Տելմանի Համբարյանի (ծնված՝ 31.01.1970թ.) սեփականության իրավունքը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամաս 1-ին փողոց 1-ին նրբ. թիվ 13 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 740.0քմ մակերեսով հողամասին կից 44.1քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Նվեր Տելմանի Համբարյանի (ծնված՝ 31.01.1970թ.) սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամաս 1-ին փողոց 1-ին նրբ. թիվ 13 հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 784.1 քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության շինությունների նկատմամբ, բացառությամբ 2013 թվականին կառուցած 45.6քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության և 1990 թվականին կառուցած 4.72քմ անավարտ շինությունների համաձայն՝ «Գասպար Վեքիլյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 13 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1876

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓՈՂՈՑ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էլմիրա Արշալույսի Գասպարյանի 13.10.2026 թվականի թիվ 02/16149 դիմումը,անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12102026-06-0035 վկայականը , ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Թատերական փողոց 9 հասցեում գտնվող 757.39 քմ մակերեսից 338.56 քմ մակերեսով (163.28 քմ նկուղ, 175.28 քմ 1-ին հարկ) բնակելի տան գործառնական նշանակությունը բնակելիից՝ հասարակական, օգտագործման նպատակը փոխել բնակելի տնից՝ խանութի:

2. Շինության նպատակային և գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2026 թվականի N 1877

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 28.09.2026 թվականին կազմված արձանագրությունները, «Նեցուկ ՀԶ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 29.10.2026 թվականի թիվ 03Ա/47-26 զեկուցագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ որոշում եմ.

Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի Զորյան 21 հասցեում առկա թվով 1 /մեկ/ ընկուզենու հատման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 29
ք.Վանաձոր